15 օգոստոսի 2013 թվականի N 864 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 541-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 23-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 300 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 541-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) աղյուսակը 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով.

«

16.	8429	Ամբարձիչ	հատ	2	ՉԺՀ/ ՉԺՀ	14878200
17.	8429	Թրթուրավոր բուլդոզեր	հատ	1	ՉԺՀ/ ՉԺՀ	45210000
18.	8429	Թրթուրավոր էքսկավատոր	հատ	1	ՉԺՀ/ ՉԺՀ	41511000
19.	8423	Էլեկտրոնային ավտոմոբիլային կշեռք	հատ	1	ՉԺՀ/ ՉԺՀ	5612205
20.	8423	Էլեկտրոնային արտադրական կշեռքներ	հատ	3	ՉԺՀ/ ՉԺՀ	2073495

»:

2) աղյուսակի «Ընդամենը» տողում «328016755» թիվը փոխարինել «437301655» թվով: